ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2994-Ա « 16 » հունիսի 2026թ.

Ն.ՉԱՐԲԱԽ 12-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ռուբիկ Գևորգյանի լ/ա Ալեքսան Ստեփանյանի դիմումը՝ Ն.Չարբախ 12-րդ փողոց հ.7 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2663174 վկայականը, Ալբերտ Սաֆարյանի համաձայնությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի Կ-02102025-01-0264 որոշումը:

Առկա է հողամասի տեղադիրքի շեղում: Համաձայն ներկայացված տեղագրական հանույթի՝ Ն. Չարբախի 12-րդ փողոցի հ.7 հողամաս հասցեում գտնվող 01-011-0146-0019 կադաստրային ծածկագրով հողամասը համադրվում է Ն. Չարբախ 12-րդ փողոց հ.9 հողամաս հասցեում գտնվող Ալբերտ Սաֆարյանին պատկանող 01-011-0146-0018 կադաստրային ծածկագրով հողամասի հետ:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ն.Չարբախ 12-րդ փողոց հ.7 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 398.42քմ՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2663174 վկայականում ամրագրված 400.0քմ փոխարեն:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 10-րդ գոտում, որ ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում /հողամասի ծածկագիր՝ 01-011-0146-0019/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ և 2021 թվականի ապրիլի 29-ի հ.698-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 3-րդ և 8-րդ կետերով, հաշվի առնելով Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-48447-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ն.Չարբախ 12-րդ փողոց հ.7 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 398.42քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ